

ԺԱ. դարում Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ - Խաչատուր եւ Վասակ Պահլավունի (*)

ԵՐՈՒԱՆԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ

ԺԱ. դարուն, Բիզանդական կայսրութեան մէջ ստեղծուած հայկական փոքր իշխանութիւններէն անկախ, որոնց սահմանները Բիզանդիոն կը զծէր Հայաստանէն իր ստացած հողերուն փոխարէն, եւ որոնց տէրերը զլիաւորաբար կու դային հայ թագաւորական կամ իշխանական ծանօթ տուներէ, կայսրութեան մէջ մենք կը հանդիպինք բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնատարներու, որոնք զինուորական եւ վարչական մարզերու մէջ եզակի ծառայութիւններ կը մատուցանէին Բիզանդիոնի: Անոնցմէ ոմանց մինչեւ իսկ վստահուած էր ընդհանրապէս հայահոծ զաղութներ ունեցող քաղաքներու եւ շրջաններու իշխանութիւնը, ինչ որ բնականաբար պիտի նպաստէր այդ շրջաններուն մէջ հայոց առաւել եւս ծաղկում մին: (1)

*) Այս սերտագութիւնը հատուած մըն է հեղինակին՝ «ԺԱ. Դարու Հայկական Փոքր Թագաւորութիւններ եւ Իշխանութիւններ» ամսիպ աշխատասիրութեան:

1) Բիզանդական կայսրութեան մէջ հայոց խաղացած դերին, ու հայ առաջին անհատներու գործունէութեան եւ անոնց վարած պաշտօններում մասին տես՝ Հ. Կ. Տէր Սահակեան, *Հայ կայսերք Բիզանդիոնի*, Ա. եւ Բ. հատորներ (Բ. տպ.), Վեմսիկ 1927 եւ 1935: P. Charanis, *The Armenians in the Byzantine Empire*, Lisbon 1963 եւ նոյնին հայերէն թարգմանութիւնը Հայկ Պերպլերեանի կողմէ, Վեմսիկ 1966: N. Adontz, *Etudes Arméno-Byzantines*, Lisbonne 1965:

969 թ.ին, Անտիոք կ'իյնար Բիզանդացիներու տիրապետութեան տակ: Քաղաքը զբաւոյց կայսերական բանակներուն հրամանատարն էր հայազգի Միքայէլ Վարդ: 976 թ.ին, ան կը նշանակուի Անտիոքի կառավարիչ: Սակայն շուտով կը միանայ Վարդ Սկլերոսի ապստամբութեան, իր հետ բերելով հայկական զորաբանակ մը: Բայց 992 թ.ին մենք զինք կրկին կը դռնենք Անտիոքի կառավարիչի պաշտօնին վրայ: (2)

Անտիոքի հայազգի երկրորդ կառավարիչն է Դամիանոս, զոր պաշտօնի վրայ կը դռնենք 995 թ.ին: Ան կը սպաննուի 998 թ.ին, արարենբու դէմ կռիւի մը ընթացքին: (3)

Հայ ժամանակագիրները 1065 թ.ին որպէս Անտիոքի դուքս կը յիշեն Պելաո անուն Շիրակունի հայ մը, «մի ոմն ի հայոց քաջ զորականաց»: (4)

Նորագոյն շրջանի հայ պատմագիրները այս Պելաոը նոյնացուցած են 1068 թ.ին՝ Ռոմանոս Դիոզինէսի (1068-1071 թթ.) կողմէ Անտիոքի կառավարիչ նշանակուած հայազգի Պաշտուրին հետ (5), որուն հետագայ դործունէութիւնները սելճուքներու դէմ (1069 թ.) եւ Ռոմանոս Դիոզինէսի գերութենէն վերադարձին անոր հանդէպ ցուցաբերած նուիրուածութիւնը, անտեսուած են հայ ժամանակագիրներու կողմէ: (6)

2) Peter Charanis, *The Armenians in the Byzantine Empire*, p. 45. Ալպոյանեանի համաձայն, «քերես» Անտիոքի առաջին հայ կառավարիչը Աբաւ էր, հաւանաբար վրաստանցի հայ մը (տես՝ Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Ա. հտր., Գահիրէ 1937, էջ 439, ծան. 1): Սակայն երկրակը ժամանակ ու թուական չի ճշդեր:

3) Նոյնը:

4) Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, վաղաքրշապատ 1898, էջ 137: Մմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, Վեներիկ 1956, էջ 62:

5) Տես՝ Ալիշամ, *Սիսուան*, Վեներիկ 1885, էջ 46-47: Է. Ամառեան, *Հայոց Անճանոնների Բառարան*, Ա. հտր., Երեւան 1942, էջ 404, Բ. հտր., Երեւան 1944, էջ 468: Նիշիշ Պարֆ. Դուրեան, *Աղբայրի Պատմութիւն*, Երուսաղէմ 1934, էջ 403-404: Ալպոյանեան, Ոչ. աշխ., էջ 439, ծան. 1:

6) Հեմբի Կրեկուար, հայ ժամանակագիրներու մօտ խաչատուրի մտացումը դատապարտուելուն պատճառ կը մկատէ անոր յումադաւամ եղած ըլլալը (տես՝ *Պաշտուր-Ասազոր*, Սիոն, 1952 Յում. - Փետր., էջ 29): Հեղինակին այս կարծիքը պիտի փորձէիմք քննութեան ենթարկել, եթէ երբեք ընդունէիմք որ իրապէս Պելաոն ու խաչատուրը տարբեր անհատներ էին:

Յ. Լորան կը մերժէ Պելստն ու Պաշատուրը նոյնացնելու ամէն փորձ: (7) Իր այս եզրակացութեան որպէս փաստարկութիւն յառաջ կը քէէ ժամանակակիցներու այն հաստատումը, թէ՛ Կոստանդին Ժ. Դուկաս (1059-1067 թթ.) կայսրը, 1059/60 թ.ին կը շնորհազրկէ Նիկեփորիցեսը, ու զայն արքունիքէն կը հեռացնէ Անտիոքի դուքս նշանակելով: Նիկեփորիցես այդ պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ 1067 թ.: Անտիոքի մէջ ան կը վարէ չափազանց անկարգապահ իշխանութիւն մը: Թշնամութիւններ կը կեղծէ ամբողջներ կառուցանելու համար, արարներ կը գրգռէ ու զանոնք կը մղէ բիւզանդական սահմանամերձ քաղաքներուն դէմ, բռնազրաւումներով ու ծանր տուրքերով կը նեղէ Անտիոքի ժողովուրդը: (8) Իշխանութեան վրայ եղած ժամանակ Նիկեփորիցեսի գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ իր եւ իր ընտանիքին ճոխացումը: (9) Կառավարելու իր այս եղանակին համար «իշխանութենէն վար առնուեցաւ սակայն քիչ յետոյ վերստին հաստատուեցաւ եւ նուազ չարազործ չդռնուեցաւ:» Կոստանդին Դուկասի մահէն ետք, Եւզոկիւս կայսրուհիին օրով Նիկեփորիցես Անտիոքի մէջ կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Իրեն կը յաջորդէ Նիկեփոր Վոստանիատէս՝ ապագայ կայսրը: Այս բոլորը պատմելէ ետք Լորան կը շարունակէ. «Այս պարագաներու մէջ հաստատելու համար թէ Անտիոքի Պելստը, միեւնոյն անձն է 1068ին իշխող Պաշատուրին հետ, պէտք է ժամանակակից աղբիւր մը իբր հիմ ունենալ այդ նոյնացման համար. սակայն այնպիսի աղբիւր մը մենք չունինք:» (10)

Ժամանակակից աղբիւրի մը յստակ կերպով չըսելը թէ՛ Պելստըն ու Պաշատուրը նոյն անձն է, բաւարար փաստ չէ մեզ համոզելու որ անոնք երկու տարբեր անձեր են: Իսկ հակառակը փաստող պատճառաբանութիւններ կարելի է յառաջ բերել:

Լորանի յօդուածին մէջ մէկ քանի հարցեր կը մնան չփոթ ու անպատասխանի: Առաջին հերթին պէտք է հարցնել թէ երբ եւ որքան ժամանակով տեղի ունեցաւ Նիկեփորիցեսի պաշտօնազրկումը: Յետոյ՝ պէտք է հարցնել թէ ո՞վ փոխարինեց Նիկեփորիցեսը անոր պաշտօնազրկման միջոցին: Տակաւին՝ Լորան երբ կը մերժէ Պելստն

7) Յ. Լորան, Պաշատուր Իշխան Անտիոքի 1068-1072, Համպտոն Ամսօրեայ, ԽԴ. տարի 1930, էջ 303-310:

8) Նոյնը, էջ 307-308:

9) Peter Charanis, *The Byzantine Empire in the Eleventh Century*, in K. M. Setton, *A History of the Crusades*, vol. I, Penn. 1958, p. 195.

10) Յ. Լորան, Գ. աշխ., էջ 308:

ու Պաշատուրը նոյնացնել, ու կը խօսի միայն Պաշատուրի մասին, անհրաժեշտ էր որ ծանօթացնէր նաեւ այն մարդը որ «Պեխտ» (լատիններէն վէսք բռնեն, որ կը նշանակէ՝ զգեստաւորող պաշտօնեայ) անունով ծանօթ է հայ պատմագրութեան:

Լօրան առարկայօրէն չի ծանօթացներ Պաշատուրը, մինչև անոր Անտիոքի իշխանութեան բարձրանալը՝ 1068 թ.ին Գլխաւորաբար ածականներ բաշխուած են անոր հասցէին, մէջբերուած բիւզանդական աղբիւրներէ: Թեւադրուած այդ աղբիւրներէն, Լօրան կ'ըսէ թէ 1068 թ.ին Ռոմանոս Պաշատուրի յանձնեց Անտիոքի իշխանութիւնը «այն պատճառաւ որ այս հայը տուած էր ապացոյցները իր քաջութեանը. ազնիւ էր, մտացի, զործունեայ, եւ բազմաթիւ անպամներ ապացուցած էր պաղարիւնութիւնը եւ իր տաղանդն իրր զօրավար» (11)

Եւ ահա թէ ինչ կ'ըսեն հայ պատմիչները Պեխտի մասին: 1065 թ.ին, երբ սելճուք թուրքեր կը յարձակին Եդեսիոյ վրայ, Պեխտ՝ «տուկ Անտիոքայ», իր բանակով օգնութեան կը փութայ քաղաքին: Սակայն Եդեսիոյ դուքսը՝ Պեղունիտ, կը թելադրէ իր անմիջական զործակիցին՝ Վարդի, որ կերպով մը սպաննէ Պեխտը, որպէսզի անոր քաջութեան համբաւը չտարածուի: Այն պահուն, երբ Նշենիկի մօտ Պեխտ իր բանակով կը հանդատանար, Վարդ կու տայ պատերազմի աղանչանը եւ ինք կը քաջուի ճակատէն: Թրքական անակնկալ յարձակումին դիմաց Պեխտ չի կորսնցներ ինքզինք. ճարպիկ ռազմավարութեամբ եւ յանդունութեամբ կ'իյնայ թուրքերու վրայ, պարտութեան կը մատնէ զանոնք ու կը փախցնէ: Իսկ ինք նախ կը հանդիպի Եդեսիա, ուր առաւել մանրամասնութեամբ կ'իմանայ դաւը, ու ապա կ'անցնի Անտիոք, ուրկէ ամէն ինչ կը տեղեկագրէ Կոստանդին Դուկաս կայսրին: Կայսրը Կ. Պոլիս կանչել կու տայ Վարդը, մորթագերծ ընել կու տայ զայն, ու մորթը խոտով լեցնել տալով կը զրկէ Եդեսիա, իսկ քաղաքի կառավարիչն ալ, Պեղունիտը, «ընկէց ի փառաց» (12)

Նշենիկի մօտ Պեխտի մղած ճակատամարտը անսակարկօրէն իրեն կը շնորհէ «քաջութեան», «մտացիութեան» եւ «պաղարիւնութեան» առաքինութիւնները, նկարագրի գիծեր, զորս բիւզանդացի պատմիչներ եւ Լօրան կը շնորհեն Պաշատուրի: Տակաւին; Նշենիկի ճակատամարտը կը վկայէ նաեւ Պեխտի ամբողջական նուիրածութիւնը կայսերական իշխանութեան – այլապէս՝ Վարդի դաւաճա-

11) Նոյճը, էջ 303:

12) Ուռհայեցի, էջ 157-158: Սմբատ Սպարապետ, էջ 82-83:

նութենէն ետք, ան կրնար նահանջել ու արդարանալ իր վարժունքին համար —, այնպէս, ինչպէս Պաշատուր կը ցուցաբերէր Ռոմանոս Դիոգինէսի նկատմամբ, երբ այս վերջինը տակաւին իրաւականօրէն տէրն էր իր դահին, Մանագկերտի ճակատամարտի պարտութենէն ետք:

Ասպարէզի ու նկարագրի այս նմանութիւնները իրաւունք չեն տար մեզի մտածելու զր Պելտու եւ Պաշատուր նոյն անձն է: Անշուշտ տակաւին կը մնայ որպէս Անտիոքի իշխան Պելտուի պաշտօնի վրայ ըլլալու երկու թուականներուն շփոթը:

Հոս եւս մենք կ'առաջնորդուինք Լօրանի մեզի փոխանցած տեղեկութիւններէն: Այնքան ատեն որ մեզի չ'ըսուի թէ երբ եւ որքան ժամանակով պաշտօնագրկուեցաւ Նիկեփորիցէս, վստահելով հայկական աղբիւրներուն, որոնց կասկածելու պատճառ չունինք այս պարագային, պիտի ըսենք որ այդ պաշտօնագրկումը տեղի ունեցած է 1065 թ.ին, երբ Նիկեփորիցէսի փոխարէն Անտիոքի իշխանութեան պաշտօնին կանչուած է Պելտու, արտօնուելով որ միաժամանակ պահէ արեւելքի մէջ գինուորական հրամանատարի իր պաշտօնը: Իսկ երբ Նիկեփորիցէս կը յաջողի վերադառնալ իր պաշտօնին, Պելտու կը դառնայ իր գինուորական ծառայութեան, մինչեւ 1068 թ., երբ Ռոմանոս Դիոգինէս կայսրը զինք կրկին կը նշանակէ Անտիոքի իշխան, վերը նշուած իր առաջինութեանց համար, ուր չէ մոռցուած նաեւ «ազնուութիւնը»: Ու ազնիւ մարդու գործ չէ՞ միթէ Պելտուի Անտիոքի իշխանութենէն քաշուիլը, այն ատեն, երբ կայսրը կը փափաքէ որ Նիկեփորիցէս վերստին ստանձնէ պաշտօնը:

Թէ ինչու հայ ժամանակադիրներ ենթական կը յիշեն Պելտու եւ ոչ թէ Պաշատուր անունով, պատճառը պէտք է փնտռել անոր յունադաւանութիւնը ընդունած ըլլալուն մէջ: Ուռհայեցի, որ բուն հակառակորդ է բիւզանդական եկեղեցիի տիրապետութեան փորձերուն, «փառքի համար» իր ազդային եկեղեցին ուրացող այս մարդուն (13) կ'ուրանար իր հայկական անունը: Նոյնը եղած է պարսկերան նաեւ Վահրամ Վարաթնունիի: Մեր պատմիչները զինք կը յիշեն միայն Փիլարտոս անունով: (14)

13) Ամառեան, Հայոց Անձնանունների Բառարան, Բ. հտր., էջ 468:

14) Փիլարտոսի ընտանեկան պարագաներում մասին տես՝ Ն. Աղանց, ԶԶ. աշխ., էջ 147-152: Փիլարտոսի քաղաքական գործունէութեան եւ անոր խաղացած դերին մասին տես՝ Կամմաքեմացի (Վեր. Եղիա Ս. Քասունի), Փիլարտոս Հայր, Հալեպ 1930:

Անբնական պէտք չէ նկատել երբ մեր պատմիչները չեն խօսիր 1069 թ.ին, Մամեստիոյ մօտերը Սաչատուրի ունեցած ռազմական ձախողութեան եւ Ռոմանոս Դիոգինէսի գերութենէն վերադարձին, Կիլիկիոյ մէջ կայսեր հանդէպ անոր ցուցաբերած հաւատարմութեան եւ բերած աջակցութեան մասին: Փաստօրէն մանրուքներ են ասոնք: Մեր պատմիչները չեն յիշեր նաեւ 1069 թ.ին՝ Գամիրսի մէջ, որպէս բելզանդացի զօրավար, Փիլարտոսի կրած պարտութիւնը սելճուքներէն: (15) Իսկ Ռոմանոսի ապրած վերջին օրերու դժբախտութիւնը Կիլիկիոյ մէջ, որուն մասնակից է Սաչատուր, իր զբաղակաւ բոլոր էջերով մէկտեղ, չի դադարիր նոյնպէս մանրամասնութիւն ըլլալէ: Տակաւին՝ այս բոլորը անմիջական ոչ մէկ աղբիւս ունին մեր ազգային պատմութեան հետ, եւ առանձին յատկանշական ոչինչ կ'աւելցնեն միջազգային պատմութեան վրայ: Այդ մանրամասնութեանց անտեսումը ուրեմն, յատկապէս ազգային ակնոցով դիտած, ոչ մէկ կորուստ կը նշանակէ:

Անտիոքի իշխանութիւնը երկրորդ անգամ ստանձնելէ տարի մը ետք, Սաչատուր՝ Ռոմանոս Դիոգինէս կայսեր կողմէ կը զբնակի Մամեստիա, արգիլելու համար Իկոնիոյ աւարարումէն վերադարձող թուրք սելճուքներու դէպի Ասորիք նահանջը: Պիտտ թէեւ կը յաջողի ետ վերցնել կողոպուտը, սակայն նահանջողները խուսափելով իրմէ, Սարուանդաքար լեռան կէրճէն անցնելով կը հասնին Հալէպ: (16)

1071 թ.ին Ռոմանոսի՝ Ալի Արսլանի մօտէն վերադարձին, Սաչատուր գինուորական աջակցութիւն ցոյց կու տայ իր կայսրին, ու երկուքով կը զործեն վերստին տիրանալ կայսերական դահլին:

Ալի Արսլանի ձեռքը գերի իյնալէ ու անոր հետ Բելզանդիոնի համար նուաստացուցիչ պայմաններով համաձայնազիր մը ստորագրելէ ետք, երբ Ռոմանոս կ'երազէր իր դահլին վերադառնալ ժամ առաջ, անդին, Կ. Պոլսոյ մէջ, Միքայէլ է. Դուկաս (1071-1078 թթ.) կայսր հռչակուած էր արդէն: Ռոմանոս կ'որոշէ զէնքի ուժով տիրանալ իր դահլին: Սակայն Ամասիոյ մէջ ան ծանր պարտութիւն մը կը կրէ բելզանդական բանակներու նոր հրամանատարէն: «Այս պարտութիւնը կը նշէ իր անկումը»: Սակայն բելզանդացիներու

15) Տես՝ Հ. Յակոբսո Տաշեմ, Հին Հայաստանի Արեւմտեան Սահմանը, Վիեննա 1948, էջ 430: Charanis, *The Byzantine Empire in the Eleventh Century*, in Setton, *A History of the Crusades*, vol. I, p. 191.

16) Լօթմ, Բ. աշխ., էջ 303: Սիսուան, էջ 46-47: Ալպոյաթեմ, Կեսարիա, Ա. հար., էջ 489, ծամ. 1:

ձեռքը դերի իյնալէ զինք կը փրկէ Պաշատուրը: «Այս Հայը, խորամանկ մարդ մը... որ Ռոմանոսի կողմէ Հասած էր բարձր դիրքերու, երբ ան տակաւին իշխանութեան վրայ էր, հիմա, տեսնելով այս վերջինին դժբախտութիւնը, եւ առիթը՝ վարձահատոյց ըլլալու, անոր մօտ եկաւ զինուորներու զօրաւոր խումբով մը: Ան քաջալերեց Ռոմանոսը որ սրտապնդուի, սքանչելի խոստումներ ըրաւ անոր, եւ փոխանակ պատերազմի մղելու, ... զայն տարաւ Կիլիկիա: Ան պատճառաբանեց թէ օտար կիրճերը այդ երկրին դադար մը պիտի ստիպեն թշնամիին: Ապա՝ բանակ մը ոտքի հանեց անոր համար, դրամ տուաւ, կայսերական հազուստներ հազցուց, ու յետոյ՝ զինելով զայն պատերազմի մը համար, ճարպիկ աւազակը, սպասեց պատեհ առիթին, վերանորոգելու համար պայքարը...»: (17)

Միքայէլի կողմէ տարուած ձախող բանակցութենէ մը ետք, բիւզանդական բանակներու հրամանատարը՝ Անդրոնիկոս, կը ստանձնէ պատերազմի ղեկավարութիւնը: Անդրոնիկոս ճակատ կը պատրաստէ Պաշատուրի դէմ: Ու հակառակ այս վերջինին մարտունակ բանակին ու ռազմավարութեան, Ռոմանոս ու Պաշատուր կը պարտուին: Պաշատուր՝ փախուստի պահուն կը դլորի ձիէն ու դերի կ'իյնայ թշնամիին ձեռքը: Երբ ան կը բերուի Անդրոնիկոսի մօտ, այս վերջինը «կրկին անդամ յաղթական կը զգայ ինքզինք»: Պաշատուր «թէեւ դերի կը պահուի, բայց ոչ մէկ սեղմում կը դրուի վրան, ինչպէս պատշաճ էր քաջ առաջնորդի մը»: (18)

Ռոմանոս կորսնցուցած էր զահը գրաւելու ամէն յոյս:

Սակայն Փսիլոս, բիւզանդական արքունիքի ամենէն հեղինակաւոր եւ խորամանկ մարդը, որ բացայայտ թշնամութիւն մը կը սնուցանէ Պաշատուրի դէմ, կը դրէ Անդրոնիկոսի որ ձեռքէ չհանէ «այդ նենգամիտ Պաշատուրը», այդ «վայրի գազանը», որ «ոչ թէ իժի մէկ մասն է, այլ վիշապին գլուխն է»: Հակառակ Փսիլոսի Պաշատուրի դէմ ունեցած այս ատելութեան, հայ իշխանը կը յաջողի փրկել իր կեանքը, շնորհիւ Անդրոնիկոսի, որուն ինքն ալ կը նուիրէ շատ թանկագին քար մը: (19)

Անշուշտ Պաշատուր պատահական զինուորական մը չէր:

17) Michael Psellus, *Fourteen Byzantine Rulers*. Translated by E. R. A. Sewter, Suffolk 1966, pp. 360-362.

18) Նոյնը, էջ 362-364:

19) Յ. Լօրան, մշ. աշխ., էջ 305-306: Ալլալյանեան, *Կեսարիա*, Ա. հար.,

1069 Թ.ին իր արձանագրած ձախողութենէն ետք իսկ իշխանութեան եւ պաշտօնի վրայ մնալը կը փաստեն իր ունեցած համբաւն ու Ռոմանոսի մօտ վայելած վստահութիւնը: Իր մեծութեան դրաւականներէն մէկն ալ այն է որ սելճուքներ պարծեցան որ «յաջողած էին խաբել Բիւզանդացւոց մեծ զօրավար Պաշատուրը», որ «Ռոմանոսներուն բուն պետն ըլլալ կը թուի»: (20) Պաշատուր այնքան հռչակ կը վայելէ թուրք-սելճուքներու մօտ – որոնց դաշնակիցն էր յետոյ՝ Ալի Արսլանի հետ Ռոմանոսի կնքած դաշինքով –, որ անոր վիպականացած դէմքը կը դռնենք «Աեյլիտ Պաթթալ թրքական վէպին մէջ, սերած արարական սկզբնատիպէ մը, որուն մէջ պահուած է Մալթիոյ դիւցազնավէպը (Թ. դար):» (21)

Ռոմանոս Իրոզինէսի աչքերուն կուրցուելուն պատճառով ստեղծուած ընդվզումը կայսերական շրջապատին մէջ, հաւանաբար իր դրական անդրադարձը ունեցաւ Պաշատուրի հանդէպ պալատին որդեգրելիք դիրքին մէջ: Այդ խառն օրերուն ճիշդ պիտի չըլլար նոր յուզումներ յառաջացնել Պաշատուրի պատճառով: Յարմարագոյնն էր խնայել իր կեանքին, միաժամանակ սակայն հեռացնելով զայն կարեւոր դիրքերէ: Փսիլոսի նման հակառակորդ մը ունենալէ ետք, ղժուար թէ կարելի ըլլար յուսալ որ Պաշատուր վերստին կը տիրանար Անտիոքի իշխանութեան: Պաշատուրի վախճանին մասին Լօրան չի փորձեր ճշգրիտ եզրակացութեան մը հասնիլ: Ան իր խօսքը կ'ամփոփէ ըսելով. «Այսչափ միայն ստոյգ է թէ Պաշատուր Ատանայի առջև դերի ինկաւ եւ այնուհետեւ պատմութիւնը ոչինչ կը հաղորդէ. ահա այսքան միայն՝ եւ ոչ աւելի, կարելի է քաղել այն յոյն պատմագիրներէն, որոնք հասած են մեզի:» (22)

Մերժելով Լօրանի՝ Պեխտն ու Պաշատուրը երկու տարբեր անձնաւորութիւններ նկատելու փորձը, հայկական աղբիւրներուն ապաւինած, հեշտութեամբ կարելի կ'ըլլայ պարզել Պեխտ – Պաշատուրի վերջին օրերը, ինչպէս նաեւ վախճանը, որ անգամ մը եւս կը մերկացնէ Բիւզանդիոնի հակահայ քաղաքականութիւնը:

Շնորհազրկելով զայն Անտիոքի իշխանութենէն, բիւզանդական արքունիքը Պաշատուրի կը յանձնէ նոյն քաղաքին մօտակայ Անդրբիունի բերդը: Ուռհայեցիի մօտ Անդրբիունի իշխանը կը կրէ Եպեխտ անունը (23), զոր հայ նորագոյն պատմագիրներ բնական

20) Հ. Կրեկուար, Բժ. աշխ., էջ 29:

21) Նայմը, տես ամբողջ յօդուածը, ուր հեղինակը կը փորձէ ուրուագծել Խաչատուրի գէմքը այդ վէպին մէջ:

22) Յ. Լօրան, Բժ. աշխ., էջ 306:

23) Ուռհայեցի, էջ 214:

կերպով նոյնացուցած են Պեխտի հետ: Լօրան կը մերժէ այս նոյնացումն ալ, եւ երկու տարբեր անձեր կը փորձէ ներկայացնել Պեխա եւ Եպեխտ անուններով: (24) Սակայն Սմբատ Սպարապետ (25) եւ Վարդան Պատմիչ, (26) իրենց ժամանակադրութեանց մէջ Անդրբիունի իշխանը յաջորդաբար կը ճանչնան Պեխտ եւ Բեխո անունով, ինչ որ կը բացատրէ թէ Ուռհայեցիի մօտ «Եպեխտ»ը արդիւնք է ձեռագրի սխալ ընդօրինակութեան մը:

1076 թ.ին, երբ Պեխտ-Պաշատուր կը հիւանդանայ, «Թաղաւորը Հոռոմ» խոստովանահայր մը կը դրկէ անոր: Օր մը, Պեխտի քնացած մէկ պահուն, յոյն քահանան կը մտնէ անոր սենեակը, «գաղանաբար» կը յարձակի վրան ու բարձով մը խեղդամահ կ'ընէ զայն: Ու այսպէս՝ «չարագործ եւ պիղծ կրօնաւորն Հոռոմաց», կը սպաննէ Պեխտը, «այր հզօր եւ քաջ», որ հակառակ իր յունադաւան կարծուելուն «ի ծածուկ զհայրենի հաւատն իւր պաշտէր զսրբոյն Գրիգորի»: (27)

Երրկայի համաձայն բիւզանդական պատմագրութեան ծանօթ Պաշատուրը «Բիւզանդիոնի դաղտնի գործակալի մը» ձեռքով սպաննուած է 1072 թ.ին: Լօրան կասկածի տակ կ'առնէ այս կարծիքը: (28)

Ոչ մէկ կասկած որ Պեխտ-Պաշատուր զոհ կ'երթար Բիւզանդիոնի հակահայ քաղաքականութեան, որ նպատակադրած էր հրապարակէն վերցնել բոլոր աչքառու այն հայերը, որոնք կրնային, յատկապէս կայսրութեան արեւելեան սահմաններուն մէջ, հայկական ինքնուրոյն դիրքորոշում ստեղծել: Կայսեր կողմէ առաջուած «Հոռոմ արեղան» միայն գործակալ մը կրնար ըլլալ, որ ստուգելէ ետք թէ որքան ալ յունադաւան, Պեխտ-Պաշատուր կը մնար հայ, սեփական ուղղութեան մարդ, զայն կ'ենթարկէր հաշուեյարդարի: Իսկ Երրկայի հաւաստիացումը որ բիւզանդացի պատմագիրներու ծանօթ Պաշատուրը 1072 թ.ին կը սպաննուի «Բիւզանդիոնի դաղտնի գործակալի մը ձեռքով», առաւել եւս կը վստահեցնէ մեզ որ Պեխտ ու Պաշատուր նոյն անձն է: Երրկա հաւանաբար չկարենալով այս

24) Յ. Լօրան, Թ. աշխ., էջ 309:

25) Սմբատ Սպարապետ, էջ 84:

26) Վարդանայ Վարդապետի Հաւաքումն Պատմութեան, Վեմսիկի 1862, էջ 105:

27) Ուռհայեցի, էջ 214: Սմբատ Սպարապետ, էջ 84: Վարդան Վրդ., էջ 105:

28) Յ. Լօրան, Թ. աշխ., էջ 306:

երկու անունները նոյնացնել նոյն անձին մէջ, 1072 թ.ին դրած է Պաշատուրի մահը, երբ տեղի կ'ունենայ անոր պաշտօնազրկումը, եւ քաղաքական ասպարէզի մահը: (29)

Պետ-Պաշատուրի զինուորները ահաւոր զայրոյթով կը հակադրեն կազմակերպուած այս ոճիրին: Անոնք կը բռնեն «Հոռոմ արեղան» ու զայն չարչարելէ ետք, կը նետեն բերդէն վար, որ «եւ սատակեցաւ անդ»: (30)

Բիւզանդիոնի հինէն ի վեր որդեգրած հակահայ այս քաղաքականութիւնը դադարից չէր նաեւ յոյն զանգուածներուն: Կայսրութեան այն քաղաքներուն մէջ ուր յոյներ կարեւոր թիւ մը կը կազմէին, հայեր յաճախ կ'ենթարկուէին հալածանքի եւ անարգանքի: Կացութիւն մը, որ յաճախ երկու ժողովուրդները կը մղէր արիւնալի բախումներու:

Թէ անտիոքացիք որքան «չար եւ ստեղծոց էին հայոց ազգին», ժամանակագիրներ կը փորձեն փաստել առանձին դէպքեր յիշելով:

1064 թ.ին, օր մը, Անտիոքի մէջ կը բռնեն Գորգ Շիրակացի կամ Անեցի անուն հայ մը, կը յափշտակեն անոր բոլոր ինչքերը, կը կտրեն մօրուքը ու նախատելով զայն դուրս կը հանեն քաղաքէն: Գորգ լուռ չի մնար սակայն: 500 թուրք վարձկան ձիաւորներ կը հաւաքէ ան ու կու դայ Անտիոքի վրայ: Կ'աւերէ գաւառը, կ'այրէ Անտիոքի դուքսին տասներկու զիւղերը, կը կոտորէ բնակիչները ու զանոնք կը նետէ դետը: Իր վրէժը այսպէս լուծելէ ետք, հայր ձայն կու տայ քաղաքին. «Նս եմ Գորգ Շիրակացին, որուն մօրուքը կտրեցիք, ահա թէ ինչ կ'արժէ մօրուք մը:» Ապա՝ մեծ աւար մը հետը վերցուցած Գորգ կը վերադառնայ իր տունը: (31)

Իսկ Բարեկենդանի օր մը, ութսուն հայ առեւտրականներ, կարաւան մը տրեխ բարձած կու գան Անտիոք, վաճառքի: Մաքսա-

29) Ալիշամ, քերես քելադրուած այն մտածումն էր թէ ինչպէս Սուրբոյ Անտիոքի իշխան մը կրնայ այդքան ընդարձակ գործունէութիւն ունենալ Կիլիկիոյ մէջ, հաշտուորը կարգած է Խարիոյ կամ Քարուտ Կիլիկիոյ Անտիոքայի իշխան (տես՝ Միսուան էջ 46, Ռաւ Լօրամ, Յշ. աշխ., էջ 308): Իրեմ հետեւած է Ռաւ Անտիոք (տես՝ Անձ. Բառարան, Բ. հտր., էջ 468): Այս, ինչպէս Ռաւ Ալիշամի այն կարծիքը թէ հաշտուորը ազգական էր Տարսուսի Ալիշամի Արծրունի իշխանին, կը մնամ անհիմն ենթադրութիւններ:

30) Ուտիայեցի, էջ 214-215: Սմբատ Սպարապետ, էջ 84: Վարդան վրդ. էջ 105:

31) Ուտիայեցի, էջ 225-226: Սմբատ Սպարապետ, էջ 90:

տան մօտ նստած անոնք խրախճանք կը սարքեն: «Ըմպէին գինի եւ պարէին դուսանքն»: Յանկարծ յօյներ կ'իյնան անոնց վրայ, կը ծեծեն զանոնք ու կը նետեն քաղաքէն դուրս: Սակայն ութսուն հայեր կը վերադառնան շուտով, կը յարձակին քաղաքացիներուն վրայ, ու զանոնք կը փախցնեն մինչեւ Սր. Պետրոս եկեղեցին, շատերուն զլուխն ու ձեռքերը կտրելով: Սարսափած հայոց այս վրէժխնդուրութենէն, քաղաքացիք խաչով ու աւետարանով կու դան հայոց դէմ հեւ երդուան այլ ոչ եւս մեղանչել նոցա»: Այսպէս է որ խաղաղութիւն կը տիրէ քաղաքին մէջ: (32)

Պետրոս-Պապատուրի պաշտօնազրկումէն ետք, Անտիոքի իշխան կը նշանակուի (1072 թ. °) Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլավունի: Իր պաշտօնի կոչուիլը թերեւս ան կը պարտէր իր հօր, որուն վստահուած իշխանութեան ընդարձակ սահմանները մեծ հեղինակութիւն մը շնորհած էին անոր:

Դժբախտաբար պատմութիւնը լուռ է Վասակի՝ որպէս Անտիոքի կառավարիչ ունեցած գործունէութեան մասին: Մեզի ծանօթ են սակայն անոր սպանութեան պարագաները, որոնք անգամ մը եւս կը դրսեւորեն բիւզանդական հակահայ քաղաքականութեան նկարագիրը:

1076 թ.ին, օր մը, երբ Վասակ Պահլավունի իշխանը իր ձիով կ'անցնէր Անտիոքի շուկային փողոցէն, երկու զինուորներ կը մօտենան իրեն, եւ խոնարհելով անոր առաջ, ինչ որ թուղթ մը կ'երկարեն: Երբ Վասակ կը ծռի իրեն մատուցուած թուղթը առնելու, անոնցմէ մէկը յանկարծ ուրազով կը հարուածէ անոր աջ կողմը: «Եւ այսպէս սպանաւ քաջն Վասակ», «ի ձեռն նենդաւոր ազդին Հոռոմաց»: Վասակի զինուորները անմիջապէս կը քաշուին բերդ, ու կը հրաւիրեն Փիլարտոսը, որուն իշխանութեան կը յանձնեն քաղաքը: Փիլարտոս կը դրաւէ քաղաքը ու 700 յօյն սպաննելով, «էտու ի նոցանէ զվրէժ արեան քաջին Վասակայ:» (33)

Վասակի անձին դէմ բիւզանդացիներու կազմակերպած այս ոճիրը, ապա՝ հայ իշխանին զինուորներուն անմիջապէս Փիլարտոսի դիմելը ու քաղաքը յանձնելու որոշումը, կ'օգնեն մեզի ըսելու

32) Ուռհայեցի, էջ 226: Մմբատ Սպարապետ, էջ 90-91:

33) Ուռհայեցի, էջ 213-214, Մմբատ Սպարապետ, էջ 83-84, վարդան վրդ., էջ 104: Մեզի համար ամհասկնալի պատճառներով, Ալիշամ՝ Վասակի մահը կը գմէ 1095 թ.իմ. «Վասակ... Անտիոքայ դուքս եզաւ եւ խաչակրաց հոմ ցալէմ քիչ տարի առաջ (1095) վախճանեցաւ» (տես՝ Ալիշամ, Շնորհալի եւ Պարագայ իւր, Վեմետիկ 1873, էջ 26):

թէ Վասակ Պաւլուսի դադրած էր Բիւզանդիոնի հլու կամակատարը ըլլալէ, ու հաւանաբար Փիլարտոսէն իսկ ներշնչուած, կը փորձէր իր սեփական քաղաքականութիւնը վարել:

Փիլարտոս Անտիոքը կը պահէ մինչեւ 1084 թ.ը, երբ սելճուքներ՝ դաւադիրներու անկցութեամբ կը զրաւեն քաղաքը, զոր կը պահեն իրենց ձեռքը, մինչեւ խաչակիրներու գալուստը:

**THE ARMENIAN GOVERNORS OF ANTIOCH
IN THE XIth CENTURY
BEKHT-KHATCHATOUR AND VASSAK BAH LAVOUNY**

YERVANT H. KASSOUNY

After tracing the role of the Armenians in the Byzantine Empire during the IX-XI centuries, the author discusses two XIth century Armenian governors of Antioch, Bekht-Khatchatour and Vassak Bahlavouny. In an earlier article H. Laurent had opposed the idea of connecting Bekht of the Armenian sources with Khatchatour of the Byzantine sources. On the basis of historical evidences, the author tries to show that Bekht and Khatchatour are one and the same person. The article goes on to present the circumstances surrounding the murder of both Armenian governors of Antioch within the context of an anti-Armenian policy of the Byzantines.